# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**2014թ. հուլիսի 18-ին, թիվ 72-Ա**

**ք.Աշտարակ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՄՐՑԱՆԱԿԻ ՀԱՄԱՐ <<ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԱՐԶԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔ>> ՄՐՑՈՒՅԹԻՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ <<ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԴՐԱՄԱՇՆՈՐՀ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.12 կետի <<բ>> և 1.19 կետի <<ա>> ենթակետերի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հուլիսի 3-ի N 694 -Ն որոշումը, **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակի համար <<Լավագույն մարզական ընտանիք>> հանրապետական մրցույթին Արագածոտնի մարզի մասնակցությունը ապահովելու նպատակով 1.200.000 հազար դրամ (մեկ միլիոն երկու հարյուր հազար դրամ) հատկացնել <<Մարդկային ռեսուրսների զարգացման Արագածոտնի մարզային կենտրոն>> հասարակական կազմակերպությանը և սահմանված կարգով կնքել դրամաշնորհի հատկացման պայմանագիր:
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակի համար <<Լավագույն մարզական ընտանիք>> մրցույթի ծախսերի նախահաշիվը՝ համաձայն հավելվածի:
3. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

**Ս. ՍԱՀԱԿՅԱՆ**

Հավելված
ՀՀ Արագածոտնի մարզպետի
2014թ. հուլիսի 18-ի
N 72 -Ա որոշման

# ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎ

Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակի համար <<Լավագույն մարզական ընտանիք>> մրցույթի հանրապետական փուլի կազմակերպման և անցկացման

| Հ/Հ | Ծախսերի անվանումը | Քանակը | Գումարը /ՀՀ.դրամ/ |
|---|---|---|---|
| 1 | Մարզահագուստի և մարզակոշիկների համար նախատեսված ծախսեր | 40 | 1.200.000 |
| | Ընդամենը | | 1.200.000 |